ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ, Ն. Ս. Օ. Տ. Տ.
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Վեհափառ Հայրապետ,

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը հայոց գիտության մշակների անունից ի խորոց սրտի շնորհավորում է Ձեզ՝ Ձեր ծննդյան 85-րդ տարելիցի առթիվ:

Ձեր ողջ կյանքը հարազատ ժողովրդին անձնանվեր ծառայելու անզուգական օրինակ է: Անձնանվեր ու անձնուրաց: Մեր ժողովուրդը զգում է դա իր հոգու բոլոր ելևէջներով, Ձեր մեջ տեսնում մեր ազգային իդեալների մարմնացումը, ուստի և Ձեր հանդեպ տածում անսահման սեր ու հարգանք:

Բարդ ու դժվարին է եղել մեր ժողովրդի կյանքի ուղին Ձեր կաթողիկոսության տարիներին ևս: Զարմանալի հմտությամբ, որ բացառիկ անհատներին է տրված ի վերուստ, Դուք կարողացել եք գտնել հայ ազգին հոգևոր սատար կանգնելու բոլոր եղանակները:

Դուք դարձել եք մեր ժողովրդի հավատը: Հավատը՝ ժողովրդի կեցության նույնիսկ ամենադժվարին պահերին, լավի ու վատի, լույսի ու մթան աղջամուղջում լավը տեսնելու, լույսին ապավինելու, իր ապագան սեփական ձեռքերով կռելու հավատը:

Այս հավատը հույժ կարևոր է հատկապես մեր օրերում, երբ

Հայոց երկրի անկախությունը մեր ժողովուրդը ստիպված է պաշտպանել ամեն օր, ամեն ժամ իր որդիների արյան գնով:

Զարմանալի եռանդով Դուք լուծում եք հայ մարդուն հուզող բազմաթիվ հարցեր և այնպես խղճի մտոք, խղճմտաբար, որ իրավամբ համարվում եք մեր ժողովրդի հավաքական խիղճը: Եվ՝ նաև ազնվությունը, բարոյական վսեմ նկարագիրը:

Ձեզ ողջ քրիստոնեական աշխարհն է ճանաչում և բարեբախտաբար Ձեր միջոցով է պատկերացում կազմում հայ մարդու մասին: Եվ դա մեծ պատիվ է ամեն մի հայի համար:

Հայ գիտնականները հպարտանում են, որ Դուք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամն եք: Դա մեծ պատիվ է նախ և առաջ մեզ համար:

Ցանկանում ենք Ձեզ, Վեհափառ Հայրապետ, ուժ ու կորով, ավյուն ու եռանդ, երկար տարիների կյանք՝ ի փառս անկախության ուղին բռնած Հայ հայրենիքի և բովանդակ ժողովրդի հայոց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Երևան,
20 սեպտեմբերի 1993 թ.